# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

"03" 12 2014թ. № 28-47-1718

Ձեր "____" ________ 20 թ. № ____

<<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
պրն. Հ. Թունյանին

Հարգելի պարոն Թունյան

Ի պատասխան Ձեր 03.12.14թ. թիվ 05/022-1959 գրության սույնով տեղեկացվում է Ձեզ առ այն, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը <<ՀՀ ԱՎԾ-ԾՀԱՊՁԲ-11/8-5>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի <<տեսավահանակ>> ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը սահմանել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.11.14թ. <<Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. ապրիլի 18-ի թիվ 441-Ն որոշմամբ հաստատված՝ տեխնիկական բնութագրերի պարամետրերից տարբերվող տեխնիկական բնութագրերով ապրանքատեսակ ձեռքբերելու թույլտվություն տալու մասին>> թիվ 1320-Ա որոշումը (պատճենը կցվում է) :

Առդիր 1 թերթ:

Հարգանքով՝

Նախագահ [signature] Ս. Մնացականյան

"ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՊՈԱԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք 7848-3
"05" 12 2014

Կատ. Գնումների գործընթացի կազմակերպման և տնտեսական բաժին,
հեռ. 52-22-51

ք. Երևան, 0010
Հանրապետության պող.,
Կառավարական տուն, 3

: (37410) 52-42-13, Fax: (37410) 52-19-21
E - mail: armstat @ sci.am
Internet: http:// www. armstat.am

# ՀԱՅԱUՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2014 թվականի N 1320 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 441-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՈՎ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի N 441-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը ձեռք բերել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի N 441-Ն որոշման 1-ին կետով հաստատված տեխնիկական բնութագրերի պարամետրերից տարբերվող տեխնիկական բնութագրով ապրանքատեսակ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ — Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ. նոյեմբերի 27
Երևան

1320k voroshum

Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
նոյեմբերի 27-ի N 1320 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 441-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿԻ

| NN ը/կ | Ձեռք բերվող ապրանքի անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
| --- | --- | --- |
| 1. | Տեսավահանակ | Էկրանի անկյունագծի չափը՝ 18.5", կետերի քանակը՝ 1366*768, ֆորմատը՝ 16:9, պայծառությունը՝ 200(քդ/մ²), հատիկավորությունը՝ 0.3 (մմ), արձագանքման ժամանակը՝ 5 (մվ), վիդեո մուտքը՝ ՎԳԱ /VGA/ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ — Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1320k voroshum

28 11 Գ-66 14